ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Լուսինե Այվազյան

ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության պետական բյուջեի հաշվառման բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

ք.Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն

2023թ. նոյեմբերի 26-ից 30-ը

3. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային բանկ, PEMPAL ծրագրի քարտուղարություն

4. Գործուղման նպատակը՝

PEMPAL գանձապետական համագործակցության թեմատիկ նիստին մասնակցելու նպատակով

5. Քննարկված թեմաները՝

- Գանձապետական միասնական հաշիվը տարբեր երկրներում
- Գանձապետական միասնական հաշվով շրջանառվող միջոցները
- Գանձապետարանի հաճախորդները
- Կանխիկ հոսքերի կանխատեսում և պլանավորում
- Գանձապետական ենթահաշիվներին առկա միջոցների օգտագործումն ու առկա սահմանափակումները

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համաժողովին մասնակցում էին PEMPAL ծրագրի 18 երկրների, ինչպես նաև Համաշխարհային բանկի ընդհանուր թվով՝ 45 ներկայացուցիչներ:

Համաժողովի ընթացքում քննարկված հարցերի շրջանակը հիմնականում առնչվում էր Գանձապետական միասնական հաշվին:

Ելույթ ունեցան Համաշխարհային բանկի փորձագետ Մարկ Սիլինսը և Մայք Վիլյամսը, ինչպես նաև ելույթներով հանդես եկան Ավստրիայի, Ալբանիայի, Մոլդովայի ներկայացուցիչները:

Յուրաքանչյուր թեմայի ներկայացումից հետո հարցեր տալու հնարավորություն էր ընձեռվում և արդյունքում կազմակերպվում էին կարճ քննարկումներ:

Միջոցառման 1-ին և 2-րդ օրերի ընթացքում կազմակերպվել են նաև փոքր խմբերով քննարկումներ՝ յուրաքանչյուր մասնակից երկրի կողմից ներկայացնելով գանձապետական միասնական հաշվի առաձնահատկությունները:

Նշված օրերին ներկայացրել եմ Հայաստանում վարվող գանձապետական միասնական հաշիվը, հաշվի շրջանակների ընդլայնման պատմական ակնարկը, հաշվի ներքո ընդգրկված միջոցները և դրանց օգտագործման հնարավորությունները և սահմանափակումները: Ներկայացրել եմ նաև գանձապետարանի կողմից սպասարկվող կազմակերպությունների շրջանակը և դրանց առանձնահատկությունները: Ներկայացնելուց հետո պատասխանել եմ մասնակիցների հարցերին:

7.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համեմատվել են համաժողովին մասնակից երկրներում վարվող գանձապետական միասնական հաշվի առաձնահատկությունները:

Ընդհանուրից առանձնացվել է Հայաստանում կիրառվող դրույթը առ այն, որ ցանկացած օրվա ավարտին գանձապետական միասնական հաշվին ազատ միջոցների առկայության դեպքում տվյալ օրվա դրությամբ պետական բյուջեի մուտքերի և ելքերի տարբերությունը կարող է լինել բացասական՝ պայմանով, որ չի խաթարվի գանձապետական մյուս ենթահաշիվներից կատարվող ելքերի իրականացումը, ինչպես նաև բյուջետային տարվա վերջին աշխատանքային օրվա ավարտին վերոնշյալ տարբերությունը պետք է լինի դրական: Մասնակիցները հետաքրքրված էին նաև Հայաստանի գանձապետարանի հաճախորդների լայն շրջանակով:

PEMPAL ծրագրի՝ հաջորդ տարիների աշխատանքները կազմակերպելու, հիմնական միտումներն ու հետաքրքրությունները պարզելու նպատակով՝ միջոցառման վերջին օրվա ընթացքում մասնակիցներին ներկայացվել է հարցաշար: Պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ հարցաշարի արդյունքներով ծրագրել հաջորդ տարվա քննարկումները:

Հարցաշարի շրջանակներում, հետագայում ուսումնասիրելու նպատակով, առանձնացրել եմ գանձապետարանում արտարժութային միջոցների հաշվառման՝ մասնակից երկրների փորձը, ինչպես նաև ներկայացրել եմ առաջարկություն՝ հնարավորության դեպքում նման միջոցառումների շրջանակում ընդգրկել նաև այցելություն հրավիրող երկրի գանձապետարան:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հետագայում ուսումնասիրելու նպատակով, առանձնացվել են մասնակից երկրների փորձը.

- կանխիկ հոսքերի և գանձապետական գործարքների ռիսկերի կառավարման Համաշխարհային բանկի ներկայացուցչի ներկայացրած մոդելը,
- տարբեր երկրներում արտարժույթով բացված գանձապետական միասնական հաշվի վարումը,

- գանձապետական միասնական հաշվի ողջամիտ մնացորդի կանխատեսումը:

9. Ստորագրությունը, ամսաթիվ՝

04.12.2023թ.